
ՔԱՌԱՆԻՍՏ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ. Վ.

Թ. Թորամանյանը և Գ. Հովսեփյանը շուրջ մեկ դար առաջ գիտական շրջանառության մեջ դրեցին քառանիստ կոթողների նորահայտ ու ինքնատիպ նմուշներ: Հայկական ճարտարապետությանն ու կերպարվեստին, մասնավորապես պատկերագրությանը նվիրված գրեթե բոլոր աշխատություններում ուսումնասիրողներն այս կամ այն չափով անդրադարձել են այդ հուշարձաններին, հիշատակել կամ ներկայացրել նոր օրինակներ: Այսուհանդերձ, հուշարձանների այս տեսակին նվիրված համակողմանի և ամփոփ ուսումնասիրություն առ այսօր գոյություն չունի: Հիմնականում վաղ միջնադարում կանգնեցված այս հուշարձանների մասին պատմագրության մեջ որոշակի տեղեկություններ չկան: Միայն մեկ-երկուսի վրա առկա արձանագրությունները նույնպես որևէ պարզաբանում չեն պարունակում նրանց անվանման մասին: Մասնագիտական գրականության մեջ այս հուշարձանները ներկայացված են տարբեր անվանումներով՝ «քառակող կոթողաձև գերեզմանաքար», «գերեզմանակոթող», «կոթողանման գերեզմանաքար», « քառա-կող, սյունանման մահարձան կոթող», «սյունանման քառակող կոթող», «քանդակագարդ կոթող», «քարակոթող», «կոթող», «ստելա», «օբելիսկ», «մահարձան», «քառակուսի կոթող», «քառակող կոթող», «քառանիստ կոթող»: Այսօր արդեն շուրջ հարյուրի հասնող ինքնատիպ այս հուշարձանների առկայությունը առաջ է բերում դրանք մեկ և հստակ անվանմամբ կոչելու խնդիրը՝ տեսակի ինքնության ու առանձնահատկությունների ընդհանրացման և, ամենակարևորը, գոյություն ունեցող այլ կոթողներից հնարավորինս ստույգ տարբերակելու և բնորոշելու առումով:

Խնդրո առարկա հուշարձանները սկզբից նեթ համարվում էին իբրև զուտ գերեզմանական: Սակայն, հիմք ընդունելով պատկերաքանդակների բովանդակությունը, Լ. Ագարյանը վիճարկեց այս ընդունված տեսակետը՝ կարծիք հայտնելով, որ քրիստոնեության սկզբնական շրջանում սրանց հիմնական նշանակությունը եղել է նոր հավատը հաստատելու փաստի հավերժացումը և իրավացիորեն առաջ քաշեց այն դրույթը, որ «... բոլոր կոթողները չեն, որ մահարձաններ պետք է համարել»¹: Լոկ այն փաստը, որ այս հուշարձաններին փոխարինելու եկած խաչքարերը կանգնեցվում էին, ի թիվս նշվածների, նաև բազմաթիվ այլ նպատակներով, ինչը հաստատապես փաստված է թե պատմական տեղեկություններով, թե նրանց վրա եղած արձանագրություններով, կարծում ենք՝ բավարար է ընդունելու, որ խնդրո առարկա հուշարձանները ինչպես հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական շրջանում միայն հավատի ու ննջեցյալի հիշատակի համար չեն դրվել, այլ ավելի լայն կիրառություն են ունեցել: Այլ հարց է,

¹ Ագարյան Լ., Վաղ միջնադարի հայկական քանդակը, Ե., 1975, էջ 58, 59:

որ գերեզմանին դրված հուշարձանների թիվը, բնականաբար, անհամեմատ մեծ է եղել, ու մեզ ավելի շատ դրանք պիտի հասնեին, ճիշտ այնպես, ինչպես խաչքարերի դեպքում է:

Ս. Բարխուդարյանը խաչքարերի մասին մի չափազանց ուշագրավ դիտողություն ունի, որն ամենայն հավանականությամբ վերաբերում է նաև քառանիստ կոթողներին. «Գոյություն ունի մի ընդհանուր սխալ կարծիք, թե խաչքարերը գերեզմանաքարեր են: Նույնիսկ գերեզմանատանը և գերեզմանի վրա կանգնած ժամանակ նրանք լոկ հիշատակարաններ են, որովհետև այդ նույն գերեզմանի վրա, որ կանգնած է խաչքարը, անպայման կա նաև առանձին գերեզմանաքար, որի արևելյան ծայրին կանգնած է խաչքարը, որպես գերեզմանից անկախ հուշարձան»²: Ուրեմն, վերոհիշյալ անվանումների մեջ գերեզման մատնանշող բառը կոթողի տիպը վկայող բնորոշում չէ, ուստի «քառակող կոթողաձև գերեզմանաքար», «գերեզմանակոթող», «կոթողանման գերեզմանաքար», «քառակող, սյունանման մահարձան կոթող» անվանումները մեր խնդրի առումով չի կարելի համարել հավաստի և ստույգ: Նույն տրամաբանությամբ, անընդունելի է նաև «քանդակագարդ կոթող» անվանումը, քանի որ մեզ հասած հուշարձանների մեջ կան առանց քանդակի օրինակներ ևս:

Խնդրո առարկա հուշարձանների տիպի, տեսակի համար բնութագրական չեն նաև «կոթողաձև», «սյունանման», «քառակոթող» անվանումները: Բացառելով նաև «կոթող», «ստելա», «օբելիսկ», «մահարձան» անվանումները, ինչը կփորձենք հիմնավորել ստորև, նշենք, որ ընտրությունը փաստորեն կատարել ենք «քառակուսի կոթող», «քառակող կոթող», «քառանիստ կոթող» անվանումների միջև: «Քառակուսի կոթող» անվանումը ևս ընդունելի չէ, քանի որ այն ենթադրում է կոթողի ստորին ու վերին չափերի հավասարություն, իսկ մեր հուշարձանների մեջ քիչ չեն այնպիսիք, որ դեպի վեր նեղանում են: Գալով քառանիստ և քառակող անվանումներին՝ նկատենք, որ ուսումնասիրողներն այս հուշարձաններին անդրադառնալիս իրավամբ չորս երեսների համար մեծ մասամբ օգտագործում են նիստ բառը, քանի որ տախտակաձև հուշարձանների դեպքում է, որ երկու լայն երեսները կոչվում են նիստ, իսկ նեղերը՝ կող: Այս ամենը նկատի առնելով է, որ խնդրո առարկա հուշարձանների համար նախընտրում ենք «քառանիստ կոթող» անվանումը: Այժմ մանրամասն անդրադառնանք «կոթող», «ստելա», «օբելիսկ», «մահարձան» անվանումներին:

Կոթող. «Քար կանգնեալ որպէս զկոճղ հաստարմատ. արձան. վէմ. սիւն. նշան. նշաւակ. բուրգն. շիրիմ. յիշատակ...»³: Հայաստանի Հանրապետության սահմաններում պահպանվել են բազմաթիվ մենհիրներ, վիշապներ, ուրարտական կոթողներ, սահմանաքարեր, սյուներ, խաչքարեր, որոնք մասնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել կոթողային հուշարձան կամ պարզապես կոթող: Կոթող են անվանվում նաև այն հուշարձանները, որոնց ձևի մասին որևէ գաղափար չունենք, դիցուք՝ Հայկական լեռնաշխարհին և Հայաստանին վերաբերող գրավոր աղբյուր-

² Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963, էջ 129:

³ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. Ա, Ե., 1997, էջ 1108:

ներում հիշատակված Սալմանասար III (Ք.ա. 858-842 թթ.), Սարգոն II (Ք.ա. 721-705 թթ.) թագավորների պատվին կանգնեցված հուշարձանները. կոթող է անվանվում անգամ, Ասորեստանի թագուհի Շամիրամի կանգնեցրած հուշարձանը, որի թե ձևն է հայտնի, թե չափերը, թե անվանումը⁴: Ակներն է, որ կոթող անվանումը, առանձին առած, չի մատնանշում հուշարձանի տիպը, ձևը, կիրառական նշանակությունը: Ուստի այն չի կարող կիրառվել իբրև հուշարձանների որոշակի տիպի անվանում, առանց այդ տիպի հիմնական հատկանիշը որակող, միանգամից ճանաչելի դարձնող որոշիչ, ինչը տվյալ դեպքում «քառանիստ» բառն է: Այսուհանդերձ, նկատենք նաև, որ հայ դասական պատմագրության մեջ կոթող՝ իբրև հուշարձանի անվանում, գոյություն չունի⁵: Բնականաբար, հարց է առաջանում՝ վաղ միջնադարում հայերը ի՞նչ անուն էին տալիս կոթողներին և, մասնավորապես, քառանիստ կոթողներին, որոնց գերակշիռ մասը կանգնեցվել է հենց այդ ժամանակահատվածում: Արդյո՞ք չկա որևէ, թեկուզ անուղղակի հիշատակություն, որ կարող է պարզություն մտցնել այս հարցում: Պատասխանը փորձենք գտնել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության մեջ, որը եզակի է և իր ընդգրկմամբ՝ հայոց պատմությունը անհիշելի ժամանակներից մինչև V դ. կեսերը, և հուշարձաններին տրված բազմաթիվ անվանումների հիշատակությամբ՝ *անդրի, արձան, արձանագրություն, բազին, կուռք, սյուն, սեղան, քար, նշան սահմանաց, մահարձան, պատկեր*: Խորենացին, մանրամասն անդրադառնալով Շամիրամի՝ Հայաստանում կատարած գործերին, Վան քաղաքին վերաբերող հատվածում գրում է. «Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմով հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եվ ոչ միայն այս, այլ ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»⁶: Առաջին նախադասությունը, ինչպես նկատում է Ստ. Մալխասյանցը, վերաբերում է Վանա բլուրի քարաժայռի ուրարտական սեպագիր արձանագրությանը⁷: Երկրորդ նախադասությունը, ըստ Ս. Բարխուդարյանի, վերաբերում է հայոց աշխարհի, հիրավի, շատ տեղերում կանգնեցված և մեզ հասած երկու տասնյակից ավելի ուրարտական կոթողներին⁸: Ի դեպ, դրանցից մեկը՝ Սարդուր II արքայի (Ք.ա. 764-735 թթ.) հանրահայտ կոթողը կանգնած է հենց արձանագրություն կրող քարաժայռի հյուսիսային կողմում: Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ ուրարտական արքաների կատարած գործերը պատմիչը վերա-

⁴ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. 1, Ե., 1981, էջ 23-24, 26, 36:

⁵ Ազաթանգեղոսի պատմության մեջ գտնում ենք միայն «կոթողեցին» բառը՝ օգտագործված Բաբելոնի աշտարակի կապակցությամբ. «... շինել ի պաշտօն մեհենից ամբարտակ մի բարձր անհնարին՝ կոթողեցին ի դաշտսն Սենէար յերկրին Ասորեստանեայց» (Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 290):

⁶ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, էջ 54:

⁷ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց (թարգմանությունը Ստ. Մալխասյանցի), Ե., 1968, էջ, 331, ծան. 43:

⁸ Բարխուդարյան Ս., Հայաստանի կոթողային հուշարձանները (ՀՍՍՌ-ԳԱ Տեղեկագիր հաս./գիտ, 1960, N 7-8, էջ 55): Հեղինակը ուրարտական կոթողները անվանում է կոթող-արձաններ:

գրում է Շամիրամին՝ առաջադրված խնդրի առումով կարևոր է այն փաստը, որ այսօր «ուրարտական կոթող» անվանվող հուշարձանը Խորենացին կոչում է «արձան»: Նա ծանոթ չի եղել սեպագիր արձանագրությունների բովանդակությանը: Ուրեմն, «արձան» բառը բնագրում առկա ուրարտերեն բառի թարգմանությունը չէ, այլ վաղ միջնադարում այս հուշարձանների՝ ընդունված, հայեցի անվանումն է եղել: Եթե նկատի առնենք, որ խնդրո առարկա հուշարձանները ձևի առումով գրեթե նույնն են, ինչ ուրարտական կոթողները, ապա, ամենայն հավանականությամբ, սրանք ևս արձան են կոչվել: Այսուհանդերձ, նախընտրությունը տալիս ենք «կոթող» բառին՝ ելնելով այն իրողությունից, որ «արձան»-ը ևս, նախ՝ չի կոնկրետացնում խնդրո առարկա հուշարձանների տեսակը, և այդ բառի իմաստային նշանակությունների շարքում այսօր առաջնային են դարձել «քանդակի տեսակ»⁹ և «մարդու կամ կենդանու եռաչափ քանդակ» տարբերակները¹⁰ և ապա՝ «կոթող»-ը գիտական շրջանառության մեջ է գրեթե հարյուր տարուց ի վեր:

Ստելա. Եվրոպական մի շարք լեզուներում, ինչպես և հայերենում, այս անվանման հիմքում ընկած է հունարեն «*stèle*» տերմինը – սյուն, շիրմաքար – ուղղաձիգ, իբրև կանոն, ուղղանկյուն կամ կոնաձև քարե սալ¹¹: Դժվար չէ նկատել, որ «ստելա» և «կոթող» տերմինները միևնույն նշանակությունն ունեն, և կոթողի առնչությամբ արված վերոհիշյալ դիտողությունը լիովին վերաբերում է նաև «ստելա» անվանմանը. ասել է թե՛ առանձին առած, չի մատնանշում հուշարձանի ձևը, տիպը և չի կարող կիրառվել իբրև խնդրո առարկա հուշարձանների անվանում: Իսկ ինչ վերաբերում է «քառանիստ կոթող», թե՛ «քառանիստ ստելա» անվանումների միջև ընտրությանը, ապա նախապատվությունը, անկասկած, պիտի տրվի առաջինին:

Օբելիսկ. Մ.թ.ա. I դ. հույն պատմիչ Դիոդորոս Միկիլագին «Պատմական գրադարան» աշխատության մեջ (գիրք II, գլ. XI, 4) տեղեկացնում է. «Շամիրամը (բնագրում՝ Սեմիրամիս) Հայկական լեռներից մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25: Նա զորքերի և եզների բազմաթիվ լծերով այդ քարը իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձրացրեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցորդներին: Ոմանք այն, իր ձևի պատճառով, անվանում են «կոթող» և համարում այսպես կոչված յոթ հրաշալիքներից մեկը»¹²: Եթե նկատենք, որ կոթող բազմանշանակ բառը բնագրում առկա «*obeliskos*» - «օբելիսկ»-ի թարգմանությունն է, ապա կունենանք մի վկայություն, որտեղ տրված են ոչ միայն հուշարձանի անունը, չափերը, այլև անվանման պատճառը՝ «իր ձևի պատճառով

⁹ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 136:

¹⁰ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Ե., 1976, էջ 85:

¹¹ *Словарь античности*, М., 1989, с. 549.

¹² Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, էջ 36: Թարգմանությունը Ս. Մ. Կրկաշարյանի՝ “*Diodori Bibliotheca Historica, vol I-V, Lipsiae, 1866-1868*” հրատարակությունից:

անվանում են օբելիսկ»¹³: Նմանատիպ հուշարձանների ձևը քաջ հայտնի է. հիմքում քառակուսի են, դեպի վեր նեղանում են և ունեն բրգաձև գագաթ¹⁴: Ուշադրության արժանի են նաև դրանց չափերը: Դիցուք, Շամիրամի օբելիսկը (եթե ընդունենք ամենափոքր ոտնաչափը 29, 62 սմ) ունեցել է 7, 4 մ լայնություն և 38, 5 մ բարձրություն: Անգամ այս չափերի դեպքում, հույն պատմիչի աշխատության անգլերեն թարգմանիչը նկատում է, որ օբելիսկը օբելոսի փոքր տեսակն է¹⁵: Նկատենք, որ խնդրո առարկա մեր հուշարձանների բարձրությունը նույնիսկ չի գերազանցում Շամիրամի օբելիսկի լայնությանը: «Օբելիսկը» այն անվանումների շարքին է պատկանում, որոնք հստակ և միանշանակ մատնանշում են հուշարձանի որոշակի տեսակ, և չնայած այն բանին, որ «օբելիսկ» կոչվող և խնդրո առարկա հուշարձանների որոշ պարամետրեր համընկնում են, այսուհանդերձ, կարծում ենք՝ դրանք նույնական չեն:

Մահարձան: Վաղ միջնադարի պատմիչներից միայն Մովսես Խորենացին է իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ օգտագործել «մահարձան» բառը, ընդ որում՝ երկու անգամ: Երվանդ թագավորին սպանում են, ու Հայաստանի թագին տիրանում է Արտաշեսը. «Բայց Արտաշեսի յիշեալ, թէ խառնուած Արշակունւոյ է Երուանդ՝ հրամայէ զղի նորա թաղել մահարձանօք»¹⁶: Երկրորդ անգամ «մահարձան» բառը պատմիչն օգտագործում է Գառնի ամրոցում Տրդատ թագավորի կատարած շինարարական աշխատանքներին անդրադառնալիս. «Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիղիստոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով»¹⁷:

Խորենացու աշխատության աշխարհաբար և ռուսերեն թարգմանության հեղինակները, ամենայն հավանականությամբ, հիմք ընդունելով Երվանդին վերաբերող տեղեկության բովանդակությունը, ինչպես նաև Հայկազյան բառարանի «մահարձան» բառատերմինի առաջին նշանակությունը՝ «արձան՝ այսինքն սին կամ կոթող կանգնեալ ի վերայ գերեզմանի մեռելոց»¹⁸, «մահարձանը» համարել են բացառապես գերեզմանական հուշարձանի անվանում և երկրորդ տեղեկության մեջ այն փոխարինել են այլ բառերով: Այսպես, Ն. Էմինը առաջին դեպքում «մահարձանօք»-ը թարգմանում է «нагробный памятник», իսկ երկրորդում՝ «колонна»¹⁹: Ս. Մալխասյանցը առաջին «մահարձանօք»-ը թողնում է նույնությամբ, իսկ երկրորդը թարգմանում է «արձան»²⁰: Գ. Սարգսյանը

առաջինը

¹³ Diodorus of Sicily, with an English Translation by C. H. Oldfather. In Ten Volumes, books I and II, 1-34, London, p. 388.

¹⁴ Словарь античности, с. 387.

¹⁵ Diodorus of Sicily, նշվ. աշխ., էջ 389:

¹⁶ Մովսես Խորենացու Պատմություն Հայոց, էջ 173:

¹⁷ Նույն տեղում, էջ 241-242:

¹⁸ ՆՎԲ, հ. Ա, էջ 566:

¹⁹ История Армении Монсея Хоренского (перевод Н. Эмина), М., 1858, с. 119, 158:

²⁰ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 180, 230:

թարգմանում է “*ПАМЯТНИК*”, երկրորդը՝ “*статуя*”²¹: Հիրավի, եթե հետևենք թարգմանիչների և այսօր էլ հայագիտության մեջ ընդունված այն տեսակետին, թե մահարձանը բացառապես գերեզմանական հուշարձան է, և այդ իմաստը կիրառենք երկրորդ տեղեկության մեջ, ապա կունենանք ավելի քան տարօրինակ միտք. այն է՝ Տրդատն իր մահացած քրոջ համար «տուն հովանոց» է կառուցում: Այսինքն, կունենանք այն, ինչից ջանացել են խուսափել մեր թարգմանիչները և «մահարձան»-ը փոխարինել են “*КОЛООНА*”, «արձան», “*статуя*” բառերով: Սակայն արդարացի թվացող այս միջամտությունը առաջադրում է նոր, ոչ պակաս կարևոր խնդիր: Տվյալ դեպքում բնագրում առկա բառի իմաստը փոխելով՝ փաստորեն խմբագրվում է տեքստը, ինչը վերջին հաշվով նշանակում է նաև, որ ի տարբերություն առաջին տեղեկության, երկրորդում «մահարձանօք» եզրը տեղին չի օգտագործված²²:

Բայց մենք գործ ունենք Մովսես Խորենացու՝ պատմահոր և նրա նույն աշխատության հետ: Բացառված է, որ պատմիչը պատահական, առավել ևս սխալ օգտագործեր «մահարձան» եզրը: Որևէ առիթ չկա նաև կասկածելու, թե բառը փոխել կամ սխալ են արտագրել գրիչները. այն բոլոր ձեռագրերում նույնն է և տարբերություն չունի: Եվ ապա, չափազանց կարևոր մի հանգամանք. Խորենացին քաջատեղյակ է և իր աշխատության մեջ բազմիցս օգտագործել է «արձան», «սյուն» (*КОЛООНА*), «անդրի» (*статуя*) բառերը և, այսուհանդերձ, թե մահկանացուն կնքած Երվանդի, թե ողջ, կենդանի Խոսրովի դուխտի կապակցությամբ նախընտրել և օգտագործել է նույն բառը՝ «մահարձանօք»: Մա ավելի քան բավարար վկայություն է այն բանի, որ պատմիչը երկու դեպքում էլ նույն նշանակությունն է դրել բառի մեջ: Արդ, եթե ելակետը՝ *մահարձան-գերեզմանական հուշարձան*, թողնում ենք նույնը և երկու դեպքում էլ ստանում անընդունելի արդյունք, ապա ակներև է, որ սխալը բխում է հենց ելակետից:

Ի տարբերություն երկրորդ տեղեկության, որին բազմիցս անդրադարձել են ուսումնասիրողները և տարբեր ու իրարամերժ կարծիքներ հայտնել թե բովանդակության և իմաստի, թե առանձին բառերի նշանակության վերաբերյալ, առաջին տեղեկության դեպքում պատմիչի խոսքը և «մահարձան» բառը ընկալվել են միանշանակ և անվերապահ՝ առանց որևէ մեկնության: «Մահարձան»-ը ընդունել են իբրև բացառապես *մահ, վախճան* իմաստ կրող բառ, իսկ *մահարձան-հուշարձանը*՝ բացառապես *գերեզմանական հուշարձան*: Մի շարք փաստերի առկայությունը, կարծում ենք, թույլ է տալիս վիճարկելու այդ տեսակետը: Ունենք մի շարք բառեր՝ *մահիկ, մահակ, մահաջառ, մահճակալ, մահկանացու...*,

²¹ Мовсес Хоренаци, նշվ. աշխ., էջ 98, 139:

²² Մահարձանը՝ իբրև գերեզմանական հուշարձան, այնքան միանշանակ է ընկալվել, որ Գ. Սարգսյանը թարգմանության ժամանակ առաջին տեղեկության (*ПАМЯТНИК*) բառն անգամ, որն ուղղակի գերեզման չի մատնանշում, երկրորդ տեղեկության մեջ փոխարինում է (*статуя*) բառով:

որոնք, «մահ» արմատը կրելով հանդերձ, *մահ-վախճան* իմաստը չեն պարունակում: Նկատենք նաև, որ ժամանակի ընթացքում բառը կարող է իմաստափոխվել կամ կրել իր նշանակություններից որևէ մեկը: Դիցուք, «մահիճ» բառը, որ նախկինում նշանակում էր «անկողին, անկողնակալ, գահույք», ինչպես նաև «ղագաղ»²³, այսօր բացառապես նշանակում է՝ «անկողին, մարդու քնելու պարագաների ամբողջություն»²⁴: Ուստի, որևէ հիմք չունենք բառի «մահ» արմատից ելնելով, այն միանշանակ մեկնաբանել իբրև վախճան մատնանշող տերմին:

Այժմ դառնանք մահարձան-հուշարձանին: Այսօր այն միանշանակ համարվում է գերեզմանական հուշարձան. «Գերեզմանի վրա կանգնեցված հուշարձան»²⁵, «քանդակագործական ստեղծագործություն կամ ճարտարապետական փոքր հորինվածք, որը դրվում է մահացածի գերեզմանին՝ նրա հիշատակը հավերժացնելու նպատակով: ... Հին և միջնադարյան Հայաստանում մահարձաններ են եղել մենհիրները, կոթողները, դամբարանները, խաչքարերը, տապանաքարերը»²⁶: Նախ նկատենք, որ հին և միջնադարյան Հայաստանին վերաբերող ձևակերպումը հստակ չէ: Եթե մի կողմ թողնենք մենհիրները, որոնց բնույթի մասին շատ քիչ բան է հայտնի, ապա կարող ենք ասել, որ կոթողները՝ սյուն, արձան, անդրի, խաչքար, բազմաթիվ կիրառություն են ունեցել և իրենց անվանումից գատ նաև «մահարձան» կարող ենք կոչել միայն այն դեպքում, երբ դրանք դրված են գերեզմանին: Ի տարբերություն սրանց, դամբարանները, տապանաքարերը, ինչպես նաև շիրմաքարերն ու գերեզմանաքարերը, բացի գերեզմանին դրվելուց, որևէ այլ կիրառում չունեն և համատեքստից դուրս էլ մատնանշում են մահ, գերեզման: Արդ, Արտաշես թագավորի կանգնեցրած հուշարձանը արդյո՞ք միայն գերեզմանին էին դնում: Դիմենք միջնադարյան պատմիչներին.

Ասողիկ. «Մա (Մմբատ - Գ. Գ.) լիք արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անույ, յԱխուրեան գետոյ մինչև ցձորն Ծաղկոցած, կրով և վիմով մածուցեալ, մահարձանօք և աշտարակօք բրգանց ...»²⁷:

Դրասխանակերտցի. «յորոյ վերայ շինեալ էր եկեղեցի նախ քան զայս իմով հրամանաւ ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ»²⁸:

Ղևոնդ. «... և համբարձեալ գնացին ի կողմանցն այնոցիկ պաշարել զքաղաքն Թեոդուպոլիս որ է Կարնոյ քաղաք: Եւ պաշարէին զնա պատնիշօք, և զամենայն ժամանակս ձմերայնւոյն մարտ եղեալ կռուէին ընդ նմա, կանգնեալ զնովաւ մահարձան, և հատանէին վէտս ծակուց արտաքուստ ի քաղաքն. այլ ոչ ինչ կարացին ստնանել, բայց որչափ սակաւ ինչ ի քարէ մեքենայիցն, որովք սատակէին ի քաղաքէն»²⁹:

²³ ՆՀԲ, հ. 2, էջ 198:

²⁴ **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., էջ 959:

²⁵ Նույն տեղում, էջ 958:

²⁶ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 7, Ե., 1981, էջ 184:

²⁷ **Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան** Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 187:

²⁸ **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ** Պատմություն Հայոց (Մկրտիչ Էմին), Մ., 1853 էջ 156:

²⁹ **Ղևոնդի** Պատմություն հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 142:

Այս հանգամանքը, որ «մահարձան» բառը օգտագործվել է թե գերեզմանի, թե տուն հովանոցի (Խորենացի), թե եկեղեցու (Դրասխանակերտցի), թե պարսպի (Ասողիկ), թե պատերազմական մեքենայի (Ղևոնդ) առնչություններով, ինչպես նաև Հայկազյան բառարանում «մահարձան» տերմինի մյուս նշանակությունները՝ «... և ամենայն բուրգն, ամբարտակ, աշտարակ ի պարիսպս և յապարանս իբրև մարտկոց կամ իբրև զարդ և հիշատակ», արդեն իսկ վկայում են, որ, ի տարբերություն մահարձան բառի արդի իմաստի և ընկալման, վաղ միջնադարում՝ Խորենացու ժամանակ, ինչպես և միջնադարում, *մահարձան* չի նշանակել բացառապես *մահացածի արձան, գերեզմանական հուշարձան*³⁰:

Խորենացին մանրամասն ներկայացնում է Արտաշեսի ու Երվանդի թշնամության պատճառը, նկարագրում պատերազմը, Երվանդի փախուստը, քաղաքի գրավումը, Երվանդի գլխին դաշույնով խփելը, նրա վախճանը, և այս ամենին անմիջապես հաջորդում է Արտաշեսի հրամանը. «... զղի նորա թաղել «մահարձանօք»: Ակներև է, որ առանց վերոհիշյալ մանրամասների էլ վերջին նախադասության «զղի» և «թաղել» բառերն արդեն իսկ մատնանշում են կանգնեցվելիք հուշարձանի նշանակությունը. այն պիտի դրվեր գերեզմանին: Արդ, արդյո՞ք պատմիչը մեկ անգամ էլ շեշտում է հուշարձանը՝ գերեզմանին դնելու հանգամանքը, թե՞ մատնանշում է հավելյալ մի տեղեկություն ևս՝ հուշարձանի տեսակը, տիպը: Արտաշեսի հրամանը նշանակու մ էր, արդյոք, ինչ-որ քար դնել գերեզմանին, ինչն, անկասկած, կարող էր անել նաև Երվանդի մտերիմներից մեկը, թե՞ դա արքայավայել հրաման էր, որը նշանակում էր իր ազգակցին և թագավորին թաղել արքայավայել՝ հատուկ տեսակի հուշարձանով պատվել նրա հիշատակը: Բերենք մի ուշագրավ վկայություն: Հայոց Արտաշես թագավորի զավակներ Արտավազդը և Տիրանը սպանում են իրենց եղբորը՝ քրմապետ Մաժանին և իրենց հոր մահից հետո հաջորդաբար թագավորում: Սրանց մյուս եղբայրը՝ Տիգրանը, երբ թագավոր է դառնում, «...պատու-

³⁰ Ղևոնդ պատմիչի վերը բերված վկայությունը միանշանակ տեղեկացնում է, որ քաղաքի պարիսպները ավերելու համար կանգնեցված պատերազմական մեքենան ևս կոչվել է *մահարձան*: Հայկազյան բառարանը մի ուշագրավ բացատրություն է տալիս «քաբան» մեքենայի մասին, որը, կարծում ենք, նմանատիպ կամ էլ նույն մեքենան է, ինչ մահարձանը. «... որ յոյժ ահագին էր. զոր ասեին, թե չորեքհարիւր սպասատուք էին նորա, որք զպարանսն քարշէին, և վաթսուն լիտր քար եղնալ ի պարսատիկսն՝ ի քաղաքըն ձգէին» (ՆԲՀ, հ. Բ, էջ 3991): Ուշադրության արժանի է նաև պարիսպ քանդող մեկ այլ մեքենայի կառուցվածքը. ուղղածիզ կանգնեցված երկու գերաններ՝ ծայրերը հորիզոնական գերանով իրար կապված, կենտրոնում՝ գերանածող, մի ծայրը՝ երկաթե ճանկով, մյուսը՝ պարանով (տե՛ս Բառարան սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 449-ի պատկերը): Պատերազմական մեքենայի և գերեզմանին դրված կոթողի «մահարձան» անվան նույնությունը կամա թե՛ ակամա մղում է այն ենթադրության, որ, անկախ անվանումների ծագումնաբանությունից, դրանց միջև գոյություն է ունեցել նաև կառուցվածքային որոշակի ընդհանրություն: Արդ, քաջ հայտնի, բայց պատմական անունը մեզ չհասած, իսկ մասնագիտական գրականության մեջ «հուշարձանակոթող», «ճարտարապետական հատուկ կառուցվածք», «մոնումենտ», «մեմորիալ մոնումենտ» հորջորջված՝ Օձունի և Աղոտի կոթողները, որոնք, հույժ ահագին լինելուց գատ, ի տարբերություն մենհիրների, վիշապների, ուրարտական կոթողների, պուրների ու արձանների, ոչ միայն համեմատաբար բարդ կառուցվածք ունեն, այլև հենց կամարներով իրար կապված երկու կողային մույթեր և կենտրոնում պուր, արդյո՞ք՝ վաղ միջնադարում կանգնեցված ու բարեբախտաբար մեզ հասած «մահարձան» կոթողի օրինակները չեն:

եալ գերեզման եղբորն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրևանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ ...»³¹: Մա կարծես Արտաշեսի ու Երվանդի պատմության կրկնությունը լինի: Ի դեպ, խոսքը Երվանդի գերեզմանին մահարձան դնող Արտաշեսի որդիների մասին է, այստեղ էլ՝ եղբայրասպանություն, թաղում, և այստեղ էլ գերեզման պատվողը թագավոր է: Եթե նկատենք նաև, որ նույն պատմիչն է՝ Մովսես Խորենացին և նույն «Պատմություն Հայոցը», ապա սպասելի էր, եթե չասենք՝ պետք էր, որ գերեզմանին դրվելիքը այստեղ էլ «մահարձան կոչվեր»: Մակայն Խորենացին օգտագործել է «Բագին» եզրը և, ինչպես Երվանդի գերեզմանի դեպքում, այստեղ ևս մատնանշել է հուշարձանի տեսակը՝ տեղեկացնելով, որ Մաժանի գերեզմանին ոչ թե այուն, արձան, անդրի և կամ մահարձան է դրվել, այլ բագին: Դա, անշուշտ, պայմանավորված էր Մաժանի՝ քրմապետ լինելու հանգամանքով: Նկատենք, որ բագինը բացառապես գերեզմանական հուշարձան չէ:

Վերոհիշյալ նկատառումները, և առաջին հերթին՝ անառարկելի այն փաստը, որ Խորենացին իր աշխատության մեջ երկու տարբեր առիթներով օգտագործել է միևնույն տերմինը, թույլ է տալիս եզրակացնել, որ «մահարձանը» բացառապես գերեզմանական հուշարձան չէ. այն, ինչպես մեզ հայտնի կոթողներից շատերը, կանգնեցվել է տարբեր առիթներով, այդ թվում նաև՝ մահվան, և Երվանդ թագավորի գերեզմանին դրված մահարձանը կոթողի որոշակի տեսակի, տիպի անվանում է³²:

Արդ, եթե վերադառնանք մեր հիմնական խնդրին, ապա «կոթող», «ստելա», «օբելիսկ» անվանումների հետ մեկտեղ պիտի բացառենք նաև «մահարձան» անվանումը: Եվ խնդրո առարկա ուղղաձիգ, առանձին կանգնած, չորս հավասար նիստերով հուշարձանները կոչենք «քառանիստ կոթողներ»:

³¹ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, էջ 201:

³² Այս եզրահանգումը ընդունելով իբրև երակետ՝ կարող ենք ամրագրել, որ Խորենացին երկրորդ տեղեկության մեջ ևս «մահարձանօք» բառը օգտագործել է իբրև կոթողի որոշակի տեսակի անվանում, ինչը վկայում է նաև տեղեկության՝ գերեզմանի հետ որևէ առնչություն չունեցող համատեքստը: Տրդատի հիմնական գործը ավերված ամրոցի ոչ միայն պարսպապատերի, այլև ամրոցի համալիրի վերակառուցումն ու բարեկարգումն էր: Այս ահռելի ամրոցի հսկայածավալ շինարարական աշխատանքների շարքում տուն հովանոցի կառուցումը, կարելի է ասել, երևելի աշխատանք չէր, և ոչ էլ այն իր արքայադուստր քրոջը նվիրելը՝ նշանակալի իրադարձություն: Արքայավայելն ու հիշատակման արժանին, անկասկած, այն էր, որ Տրդատն այդ ամենը կատարել և խոսրովիդուխտին էր նվիրել Գառնի ամրոց-քաղաքն ամբողջությամբ: Իր թագավոր նախնիների և ընդհանրապես արքայական ավանդույթին հետամուտ՝ Տրդատը շինում է նաև «մահարձան» կոչվող կոթող՝ «սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ» և իր կատարած շինարարական աշխատանքների, այդ թվում նաև նորակառույց տուն հովանոցի, կոթողի և, որ ամենակարևորն է՝ Գառնի ամրոցի նվիրատվության փաստը, այսինքն, թագավորական հրամանը արձանագրում է այդ կոթողի վրա. «և գրեալ ի նմա գլխատակ իւր հելլենացի գրով»:

К ВОПРОСУ О НАИМЕНОВАНИИ ЧЕТЫРЕХГРАННЫХ СТЕЛ

ГРИГОРЯН Г. В.

Резюме

Существование таких оригинальных памятников, как четырехгранные стелы, которых насчитывается около сотни, требует разработки единого и четкого наименования, учитывающего их своеобразие и, что особенно важно, их отличие и специфичность по отношению к прочим стелам. В специальной литературе они фигурируют под разными названиями. Рассмотрение каждого из этих названий с точки зрения содержания, композиции, формы, иконографии памятников, а также сравнительный анализ имеющихся о них исторических сведений позволяет утверждать, что для обособленно стоящих, вертикальных, граненых камней с четырьмя одинаковыми сторонами предпочтительно наименование *четырехгранная стела*.